01/04/0723 - 1200 ՕՏՄ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Անշարժ գույքի ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ պայմանագիրը լուծելու մասին
Երկու հազար յոթ թվականի մարտի տասին

ք.Երևան

Մենք՝ Հենրիկ Հայրիկի Պողոսյանս, անձնագիր՝ [redacted] տրված 26.01.1999թ. 008 կողմից, բնակ. Երևան Օհանովի փող. 8շ., բն.46 և «ԵՎՐՈՊԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, վկայական 01Ա026591, որի անունից լիազորագրով, հաստատված ընկերության տնօրեն Սերյոժա Մանուկյանի կողմից 09.03.2007թ, գործում է Արմեն Մանուկյանը, անձնագիր՝ [redacted] տրված 10.09.1998թ. 004 կողմից, բնակ. Երևան Կոմիտասի 7/4-11,

ԿՆՔԵՑԻՆՔ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

1. Ես՝ Հենրիկ Հայրիկի Պողոսյանս հայտնում եմ, որ Երևանի Շիրազի փողոցին հարող տարածք-հողամասը հանձնել եմ Անհատույց օգտագործման «ԵՎՐՈՊԱ» ՍՊԸ-ին, իսկ «ԵՎՐՈՊԱ» ՍՊԸ-ն Երևանի Շիրազի փողոցին հարող տարածք-հողամասը վերցրել է Անհատույց օգտագործման:

Անշարժ գույքի Անհատույց օգտագործման պայմանագիրը վավերացվել է ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ելենա Սարգսյանի կողմից, 27.12.2004թ., սեղանամատյան 24067:

2. Մեր փոխադարձ համաձայնությամբ նշված Անհատույց օգտագործման պայմանագիրը համարում ենք ԼՈՒԾՎԱԾ:

3. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնցից մեկ օրինակը պահվում է նոտարական տարածքում, մյուս օրինակները տրվում են կողմերին:

4. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

Ստորագրություններ՝

Հ. Պողոսյան

Արմեն Մանուկյան

Երկու հազար յոթ թվականի մարտի տասին համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանիս կողմից:

Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

ՀՀ Քաղ-օր-ի 622 և 623 հոդվածի համաձայն, սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

Ստորագրողների ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում N 1412

Գանձված է պետական տուրք
[redacted]ության վճար համաձայն
[redacted]ական տուրքի մասին»
և «Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար _____ Ա.Մելքոնյան

ՀՀ Կենտրոն նոտարական տարածք
RA Kentron Notarial Territory
ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
NOTARIAL DOCUMENT
2541583